Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այուհետ՝ Օրենսգիրք) 50-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 50. Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը և իրավասությունը**

1. Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը:

2. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի վճռիների և որոշումների վերանայման արդյունքում կայացրած որոշումները, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ օրենքով նախատեսված միջանկյալ դատական ակտերը:

3. Վճռաբեկ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

4. Վճռաբեկ դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքն է»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 50.1-րդ հոդվածով.

«**Հոդված 50.1 Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը**

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե գալիս է հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերույթ թույլ է տրվել այնպիսի կոպիտ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանների առնվազն երկու միմյանց հակասող դատական ակտեր,

2) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ միմյանց հակասող դատական ակտեր,

3) բողոքարկվող դատական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը,

4) բողոքարկվող դատական ակտն հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշմանը,

5) ստորադաս դատարանը հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության օրենքը, կամ

6) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավակիրառ պրակտիկայի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով կոպիտ խախտումները յուրաքանչյուր դատավարության համար սահմանվում են համապատասխան դատավարական օրենսգրքով:

4. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը

վարույթ ընդունելու՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

6. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունվելու դեպքում վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտի պատճառաբանական մասը պետք է պարունակի տվյալ գործով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հիմնավորումը»:

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասը.

«1.1. Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները պարտադիր հրապարակվում են Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: